ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 22

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Գրեկյան Երվանդ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Արաքս Փաշայան
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՆ ԵՎ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ». ԵՐԿԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....7-21

Գոռ Գևորգյան
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ (1981-2014 ԹԹ.).....22-34

Վահե Հակոբյան, Տաթևիկ Մկրտչյան, Հայկ Քոչարյան
ԹՎԻԹԵՐԻ ԱՐԱԲԱԼԵՋՈՒ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ 2020Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2020-2021ԹԹ.).....35-49

Տաթևիկ Մկրտչյան
ԻՄԱՄ ԱԼԻԻ ՆԱՄԱԿԸ ՄԱԼԻՔ ԱԼ-ԱՇԹԱՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՎԱԽՈՒԹՅԱՆ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ՄԻ ՆՄՈՒՇ.....50-61

Անանա Անտոնյան
ՏԱԲԱԿԱԹ ԺԱՆՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 9-ՐԴ ԴԱՐԻ ԱՐԱԲԱՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ.....62-75

Սպարտակ Բաղդասարյան
2005 Թ.-Ի ԻՐԱՔՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ.....76-94

Թյուրքագիտություն

Լուսինե Խաչատրյան, Անուշիկ Մարտիրոսյան, Ալեքսանդր Սաֆարյան
ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ÜZERE ԵՎ DİYE ՀԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ.....95-109

Սամվել Ռամազյան
ՆՈՐԱՀԱՅՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐ «ՔՅՈՌՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՒՄ 110-116

Թամարա Աղամալյան
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ 1965-1969 ԹԹ. 117-131

Ալբինա Մուրադյան
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ 132-152

Իրանագիտություն

Արփինե Առուշանյան
ՀՈԳՈՒ ՎԵՐԱՄԱՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԾԱՅՐԱՀԵՂ ՇԻԱՅԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐՈՒՄ 153-167

Լիանա Պետրոսյան
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԻԻՀ-ՈՒՄ Մ. ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (2005-2013ԹԹ.) 168-182

Ժաննա Վարդանյան *
ԻՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ՀԵՏՈ 183-195

***

Աշխեն Հովսեփյան
ՀԱՅ-ՀՆԴԿԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 196-204

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
Արտյոմ Տոնոյան
Հովհաննես Խորիկյան, Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը, «Էլդորադո» հրատ., Հայաստանի Հանրապետություն, Գյումրի, 2021, 456 էջ: 205-211

CONTENT

Arabic Studies

Araks Pashayan
SAUDI ARABIA AND THE «ARAB SPRING». THE POLICY OF DOUBLE STANDARDS 7-21

Gor Gevorgyan
TRANSFORMATION OF EGYPT`S ARAB POLICY: OPPORTUNITIES AND CHALLENGES (1981-2014) 22-34

Vahe Hakobyan, Tatevik Mkrtchyan, Hayk Kocharyan
DISCUSSION OF THE MAIN DISCOURSES OF THE 2020 44-DAY ARTSAKH WAR AND THE SUBSEQUENT PERIOD IN THE ARABIC-LANGUAGE TWITTER (2020-2021). 35-49

Tatev Mkrtchyan
IMAM ALI'S LETTER TO MALIK AL-ASHTAR AS A MODEL OF JUST GOVERNANCE/RULERSHIP, RELIGIOUS RIGHTEOUSNESS AND PIETY 50-61

Anna Antonyan
THE FORMATION OF THE ṬABAQĀT GENRE IN THE 9TH CENTURY ARAB-MUSLIM WRITTEN CULTURE 62-75

Spartak Baghdasaryan
THE 2005 IRAQI CONSTITUTION AND THE FORMATION OF A NEW SYSTEM OF GOVERNMENT 76-94

Turkic Studies

Lusine Khachatryan, Anushik Martirosyan, Alexander Safaryan
ON THE PECULIARITIES OF TEACHING TERMS FORMED WITH PREPOSITIONS ÜZERE AND DİYE OF THE TURKISH LANGUAGE AND THEIR COLLOCATIONS IN THE ARMENIAN LANGUAGE 95-109

Samvel Ramazyan
NEWLY DISCOVERED ARMENIAN PERSONAGES IN
THE TURKISH VERSIONS OF THE EPIC "KOROGLU" 110-116

Tamara Aghamalyan
IDEOLOGICAL BASIS OF THE REPUBLICAN PEASANTS'
NATION PARTY 1965-1969 117-131

Albina Muradyan
PUBLIC PERCEPTIONS AND MANIFESTATIONS OF RELIGIOUS
AND TRADITIONAL BELIEFS DURING
THE CORONAVIRUS PANDEMIC IN TURKEY 132-152

Iranian Studies

Arpine Arushanyan
THE IDEA OF THE TRANSMIGRATION OF SOULS
IN EXTREME SHIA SECTS 153-167

Liana Petrosyan
HUMAN RIGHTS AND FREEDOM OF SPEECH IN IRI DURING
M. AHMADINEJAD'S PRESIDENCY (2005-2013) 168-182

Zhanna Vardanyan
IRAN'S POSITION DURING AND AFTER
THE THIRD ARTSAKH WAR 183-195

***

Ashkhen Hovsepyan
ARMENIAN-INDIAN RELATIONS. HISTORICAL
OVERVIEW 196-204

BOOK REVIEW

Artyom Tonoyan
Hovhannes Khorikyan, The Administrative Divisions of Achaemenid
Iran, "Eldorado" publisher, RA, Gyumri, 2021, 456 p: 205-211

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Խորիկյան, Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումը, «Էլդորադո» հրատ., Հայաստանի Հանրապետություն, Գյումրի, 2021, 456 էջ:

Համաշխարհային քաղաքակրթության հնագույն օրրաններից մեկի՝ Իրանի պատմական անցյալի նկատմամբ հետաքրքրությունը մեծ է եղել ոչ միայն ուսումնասիրողների, այլև ընթերցող լայն հասարակայնության համար: Իրանի պատմության նկատմամբ հետաքրքրությունը մեծ է եղել նաև հայ ժողովրդի համար, որը հարյուրամյակներ շարունակ իր վրա է կրել իրանական քաղաքակրթության հսկայական ազդեցությունը: Մ. թ. ա. VI-IV դարերը Իրանի հին պատմության՝ Աքեմենյան Պարսկաստանի երկհարյուրամյա գոյության կարևորագույն և փառավոր շրջանն է: Առաջանալով մ. թ. ա. VI դարում՝ Աքեմենյան պետությունը պատմության մեջ առաջին համաշխարհային տերությունն էր, որն իր գոյության երկու դարերի ընթացքում վիթխարածավալ սահմանների մեջ միավորեց զարգացման տարբեր աստիճանի վրա գտնվող տասնյակ ժողովուրդների և երկրների, որոնց պատմական ճակատագրերը սերտորեն միահյուսվեցին և, ըստ էության, Աքեմենյան տերության պատմությունը դարձավ Եգիպտոսից մինչև հյուսիսարևմտյան Հնդկաստան բնակվող ժողովուրդների սեփական պատմությունը:

Աքեմենյան Պարսկաստանի պատմությունը շարունակում է մնալ ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Աղբյուրագիտական նյութի նոր մեկնաբանություններն ու նորովի քննությունը շատ հաճախ փոխում են մեր պատկերացումներն Աքեմենյան տերության պատմության բազմաթիվ հարցերում: Այդ իմաստով բոլորովին էլ բացառություն չի կազմում Հովհաննես

Խորիկյանի նոր մենագրությունը, որտեղ հեղինակը փորձել է նորովի անդրադառնալ Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման և պատմական աշխարհագրության խնդիրներին:

Մենագրությունը կազմված է ներածությունից, 5 գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, անգլերեն ամփոփումից, համառոտագրություններից, աղբյուրների և գրականության հարուստ ցանկից:

Մենագրության առաջին գլխում հանգամանորեն ներկայացված են Փոքր Ասիայի տարածքն ընդգրկող երկրների ու սատրապությունների տեղադրությունը, սահմանները, տարածքները, Փոքր Ասիայում բնակվող տարբեր ժողովուրդների ու ցեղերի նույնականացման և տեղորոշման հարցերը, ինչպես նաև քաղաքների, լեռների, գետերի, լճերի նույնացման ու տեղադրության նոր տեսակետները կամ հին տեսակետների լրացուցիչ ու էական հիմնավորումները:

Երկրորդ գլխում մանրամասն քննվում են Եգիպտոսի, Արաբիայի, Պաղեստինի, Սիրիայի և Փյունիկիայի վարչական կացության հետ կապված բազմաբնույթ հարցերը, որոնք մասնագիտական գրականության մեջ հիմնականում կա՛մ թերի են ուսումնասիրվել, կա՛մ, ըստ հարկի, ուշադրության չեն արժանացել:

Երրորդ գլխում հինարևելյան սեպագիր, հունահռոմեական, հայկական և այլ սկզբնաղբյուրների մանրակրկիտ քննությամբ ներկայացվում է Առաջավոր Ասիայի տարածքն ընդգրկող տարբեր սատրապությունների, սրանց մաս կազմող ենթաշրջանների կամ հյուպարքիաների վարչական սահմանները՝ կատարելով համաժամանակյա և տարաժամանակյա հմուտ քննություն: Շատ կարևոր են հեղինակի կողմից Առաջավոր Ասիայում բնակվող ցեղերի ու ժողովուրդների նույնացման և տեղադրության հարցերին նվիրված մեկնաբանությունները, որոնք թույլ են տալիս

նոր լույսով պատկերացնել տարածաշրջանի էթնիկական քարտեզը:

Չորրորդ գլխում հեղինակը ցույց է տալիս Միջին Ասիան և հնդկական հողերն ընդգրկող սատրապությունների տեղադրությունը՝ կատարելով էթնիկական նույնացման ու ցեղային տեղաշարժերի ուշագրավ բացահայտումներ. օրինակ, սակ-սկյութների ու կասպերի հետ կապված եզրահանգումները:

Հինգերորդ գլխում հեղինակի խորքային ու բազմակողմանի քննությունը թույլ է տվել ներկայացնել Աքեմենյան Պարսկաստանի սատրապությունների ձևավորման սկզբունքը, ինչը պայմանավորված էր 20-ից ավելի վարչական միավորների կազմավորման ժամանակագրական հերթականությամբ: Հեղինակի կողմից Ակաուֆաչիյա երկրի տեղորոշման և անվան ստուգաբանությունը ևս լուրջ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ որոշակի փոփոխությունների են ենթարկվում մինչ այս եղած պատկերացումներն Այսրկովկասի պատմական աշխարհագրության վերաբերյալ: Սկուդրայի կամ XXI սատրապության, ցեղային վերաբնակեցումների քաղաքականության, ռազմավարչական բարձր պաշտոնի՝ կարանոսի հետ կապված հարցերի վերլուծությունը ևս թույլ է տվել հեղինակին ուշադրության արժանի հետևություններ կատարել:

Մենագրությունն ավարտվում է եզրակացությամբ, որտեղ ներկայացված են համապատասխան եզրահանգումները:

Մենագրությունն ունի ունի արդիական գիտական, նաև քաղաքական նշանակություն, եթե հաշվի է առնվում մերօրյա այն իրողությունը, որ հատկապես Հայաստանի հարևան երկրներում, մասնավորապես Թուրքիայիում և հատկապես Ադրբեջանում պետական պատվերով և հովանավորչությամբ համակարգային ձևով և շարունակաբար նենգափոխվում է Առաջավոր Ասիայի հնագույն և հին պատմությունը: Պետք է նշել, որ մասնագիտական

գրականության մեջ, ընդհանուր առմամբ, Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման և պատմական աշխարհագրության միայն որոշ հարցերն են ուսումնասիրվել: Ընդ որում, Աքեմենյան Պարսկաստանի պատմական աշխարհագրության հարցերը քննվել են հիմնականում այդ տերության վարչական բաժանման սկզբունքից անկախ, ինչը և հանգեցրել է անընդունելի, առանձին դեպքերում նույնիսկ սխալ եզրակացությունների: Աքեմենյան Պարսկաստանի վարչաքաղաքական համակարգի ուսումնասիրության վերաբերյալ, այսինքն՝ մ. թ. ա. VI-IV դարերի ժամանակահատվածի ողջ ընդգրկումով, ցայսօր չկա ամբողջական աշխատություն: Ըստ այդմ էլ մենագրությունում պատմաաշխարհագրական ճշգրտումները, նույնացումները ուսումնասիրվել են Աքեմենյան տերության վարչական բաժանման սկզբունքի համատեքստում: Հեղինակը քննության է ենթարկել Աքեմենյան Պարսկաստանի 21 սատրապությունների ընդգրկած տարածքը, սահմանները, էթնիկական կազմը և ցեղային տեղաշարժերն այդ տերության ներսում՝ կատարելով տեղագրական ճշգրտումներ, սահմանների հստակեցում, աշխարհագրական բառակապակցությունների պարզաբանում, քաղաքական պատմության որոշ հարցերի նորովի լուսաբանում և այլն:

Հովհաննես Խորիկյանին հաջողվել է տարալեզու սեպագիր սկզբնաղբյուրների, դասական հեղինակների տեղեկությունների, հնագիտական նյութի վերլուծությամբ ներկայացնել Աքեմենյան տերության երկդարյա պատմության վարչական կառուցվածքը՝ կատարելով հիմնավոր եզրակացություններ և առաջադրելով նոր տեսակետներ: Սեպագիր տարբեր աղբյուրների, արամեերեն, փռյուգերեն, կարիերեն, լիկիերեն և այլ գրավոր տեքստերի, ինչպես նաև տարբեր դարաշրջանների անտիկ հեղինակների,

Աստվածաշնչի տեղեկությունների քննությունը կատարվել է ժամանակի և տարածության մեջ՝ վերհանելով վարչական և էթնիկական այն իրողություններն ու տեղաշարժերը, որոնց ենթարկվում էր Աքեմենյան Պարսկաստանի վարչաքաղաքական բաժանման համակարգը մ. թ. ա. VI-IV դարերում:

Սկզբնաղբյուրներին համակողմանի տիրապետելը թույլ է տվել հեղինակին իր պատմաաշխարհագրական որոշ տեսակետները հիմնավորել նաև լեզվաբանական վերլուծությամբ, ինչը ավելի փաստարկված է դարձրել եզրակացությունները: Հեղինակի կողմից կատարված պատմաաշխարհագրական ճշգրտումները թույլ են տվել Աքեմենյան տերության և վերջինիս կազմում գտնված երկրների ու ժողովուրդների քաղաքական պատմության հիմնահարցերն այլ լույսով մեկնաբանել՝ վերանայելով պատմագիտության մեջ տասնամյակներ շարունակ քաղաքացիություն ստացած կարծիքները:

Արժեքավոր է նաև այն իրողությունը, որ հեղինակի ցանկացած ենթադրություն հիմնված է աղբյուրագիտական համակողմանի քննության վրա՝ հաշվի առնելով նաև մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետները: Հեղինակն օգտագործել է խնդրին առնչվող մասնագիտական հարուստ գրականություն, որտեղ դասական ուսումնասիրողների տեսակետները ներկայացվում են ժամանակակից գիտական ձեռքբերումների համատեքստում:

Մենագրության գլուխները շարադրված են տրամաբանական հաջորդականության մեջ, ինչը թույլ է տվել հեղինակին մշտապես ցույց տալ իր քննության շարունակական ընթացքը:

Այսպիսով, մենագրության վերաբերյալ նույնիսկ այս խիստ հակիրճ բովանդակային ընդհանրական ծանոթությունը թույլ է տալիս աշխատությունը համարել հաջողված ոչ միայն աղբյուրագիտական նյութի աննախադեպ օգտագործման ծավալի

ու խորության, այլև մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեցող բազմաթիվ բացերը լրացնելու տեսանկյուններից:

Կատարված հսկայական աշխատանքի վերաբերյալ ստորև ներկայացնենք մի քանի առաջարկություններ ու դիտողություններ: Օրինակ, մենագրության մեջ առանձին ենթագլխով հեղինակը կարող էր քննության առարկա դարձնել սատրապի ինստիտուտի ուսումնասիրությունը, ինչը վարչական բաժանման համատեքստում թույլ կտար խորքային պատկերացում կազմել սատրապությունների ներքին կառավարման մասին:

Հեղինակը մենագրության էջ 203-ի հղում 1255-ում սասպեյրներ-ասպեյրներ ցեղանվան ստուգաբանության վերաբերյալ առաջարկում է մի վարկած, ըստ որի, ցեղանունը հնարավոր է կապ ունենար իրան. *aspabāra-, հին պարսկ. asabāra- «հեծյալ» բառի հետ, և Սասպեյր երկրանունը նշանակել է «հեծյալների երկիր»: Այս հարցը հեղինակը մենագրության բուն տեքստում պետք է քննարկման առարկա դարձներ, քանի որ վարկածն իրոք կարևոր է:

Լեզվաբանորեն վիճելի է Ակաուֆակա կամ Ակաուֆաչիյա երկրանվան վերաբերյալ հեղինակի՝ «ոչ լեռնցիներ, դաշտաբնակներ» ստուգաբանությունը, բայց հնարավոր է այդ երկրի տեղադրությունը Կուր գետի և Կովկասյան մեծ լեռնաշղթայի միջև:

Մենագրության հիմնական թերությունը քարտեզների բացակայությունն է, ինչը հեղինակը գրքի վերահրատարակման ժամանակ կարող է ուղղել:

Ամփոփենք. հայրենի գիտական հանրության սեղանին դրվել է մի ուշագրավ աշխատություն, որն իր նշանակությամբ դուրս է գալիս իրանագիտության շրջանակներից, քանի որ ունի

արևելագիտական լայն ընդգրկում և բազմաբնույթ հարցերի արծարծման ծավալով կարող է ուղենիշ լինել նմանատիպ ուսումնասիրությունների համար: Հետևաբար, շահեկան կլիներ, եթե Հովհաննես Խորիկյանի մենագրությունը թարգմանվեր ռուսերեն, անգլերեն և համաշխարհային պատմագիտական հանրությանը նույնպես հասու լիներ:

Արտյոմ Տոնոյան, բ.գ.թ.
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի դոցենտ,
ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
Իրանի բաժնի գիտաշխատող